

Կենսաբանություն-2016, I ՓՈԻԼ
տևողությունը 60 րոպե
9-րդ դասարան

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

Յուրաքանչյուր թեստում առաջարկվում է 4 պատասխան: Ընտրեք միայն մեկը, որը, ըստ Ձեզ, առավել ճիշտ է և ամբողջական:

1. Ստորև բերված բույսերից ո՞րի արմատային համակարգն է փնջաձև.

1. – Ճակնդեղ
2. – արևածաղիկ
3. – վարդակակաչ
4. – ոլոռ

2. Միասեռ ծաղիկներ են բնորոշ .

1. – դդումիին
2. – ցորենին
3. – ոլոռին
4. – աշորային

3. Հասկ ծաղկաբույլը բնորոշ է .

1. – սամիթին
2. – եզան լեզվին
3. – հովտաշուշանին
4. – թրաշուշանին

4. Մարդու արյան շրջապտույտը մեծ շրջանով տևում է .

1. – մեկ րոպեից ավել
2. – մոտավորապես 0,5 րոպե
3. – քսան վայրկյանից ավել
4. – մեկ ժամից ավել

5. Արհեստական շնչառություն իրականացնելիս հաջողության նշաններից մեկն է տուժածի.

1. – մարմնի ջերմաստիճանի բարձրացումը
2. – արյան ճնշման նվազումը
3. – բիբերի նեղացումը
4. – բիբերի լայնացումը

6. Պատվաստանյութի ներմուծումը մարդու օրգանիզմ նպաստում է.

1. արհեստական պասիվ իմունիտետի առաջացմանը
2. արհեստական ակտիվ իմունիտետի առաջացմանը
3. բնական բնածին իմունիտետի առաջացմանը
4. բնական ձեռքբերովի իմունիտետի առաջացմանը

7. Որտեղի՞ց են ի հայտ գալիս հիդրայի խայթող նոր բջիջները.

1. – խայթող բջիջները կիսվում են
2. – խայթող բջիջները առաջանում են միջանկյալ բջիջներից
3. – խայթող բջիջները առաջանում են մաշկամկանային բջիջներից
4. – խայթող բջիջները չեն վերականգնվում՝ հիդրան սատկում է, երբ նրանց պաշարը վերջանում է

8. Ունե՞ն արդյոք կլոր որդերը մարմնի խոռոչ

1. – այո, ունեն մարմնի առաջնային խոռոչ
2. – այո, ունեն մարմնի երկրորդային խոռոչ
3. – այո, ունեն մարմնի խառը խոռոչ
4. – ոչ, չունեն

9. . Թվարկած տարրերից ո՞րն է անհրաժեշտ քլորոֆիլի սինթեզի համար, բայց չի մտնում նրա կազմի մեջ.

1. – ածխածինը
2. – մագնեզիումը
3. – ազոտը
4. – երկաթը

10. Գորշ ջրիմուռներում կուտակվող պաշարանյութ չէ.

1. – օսլան
2. – գլյուկոզը
3. – մանիտը
4. – լամինարինը

11. Լիզոսոմները պարունակում են

1. – ԴՆԹ
2. – ՌՆԹ
3. – գլիկոլիզի ֆերմենտներ
4. – ֆոսֆոլիպիդներ

12. Բջջապատի սինթեզը ճնշվում է .

1. – ստրեպտոմիցինով
2. – քլորամֆենիկոլով
3. – պենիցիլինով
4. – տետրացիկլինով

13. Թվարկած նմուշներից ո՞րի մեջ է, որ աղիքային ցուպիկի հայտնաբերումը տազնապահարույց չէ.

1. – իսմելու ջուր
2. – նորածին երեխայի կղանք
3. – մեծ մարդու կղանք
4. – մեծ մարդու մեզ

14. Վիրուսը վարակիչ ազենտ է, որն ունակ է.

- 1.– բազմանալու բջիջներում և բջիջներից դուրս
- 2.– բազմանալու միայն բջջում
- 3.– օգտագործելու շրջակա միջավայրի սննդանյութերը
- 4.– արտագատելու շրջակա միջավայր ախտածին նյութեր

15. Հարվահանագեղձի պարաթիրոնը ակտիվացնում է կայցիումի թափանցումը աղիքներից արյուն այն պարագայում, երբ սննդի հետ մարդու օրգանիզմ է մտնում բավարար քանակի վիտամին.

1. – D
2. – C
3. – E
4. – B₁

Կարճ պատասխանով առաջադրանքներ

16. Արյան խմբի ձևավորման համար պատասխանատու մեկ գենի քանի՞ ավել է պարունակվում մարդու գամետում (նորմալում):

17. Ռիբոնուկլեազ ֆերմենտը կազմված է 124 ամինաթթվային մնացորդից: Քանի՞ պեպտիդային կապ է առաջացել այդ ֆերմենտի առաջնային կառուցվածքը ստանալիս:

18. Եզիպտացորենի բույսից, որն իր սումատիկ բջիջներում ունեւր 20 քրոմոսոմ, ստացվեց 200 սերմ: Քանի՞ սպերմիում է մասնակցել այդ սերմերի առաջացման գործընթացում:

19. Հնդկաքաղաղը ունի 82 քրոմոսոմ: Քանի՞ քրոմոսոմ ունի պարթենոգենետիկ հնդկաքաղաղը:

20. Մարդու ընդունած սննդի էներգետիկական արժեքը 19600 կՋ է: Տիզիկական աշխատանք կատարելիս մարդու մարմնից գոլորշիացավ 400 գ քրտինք: Մեկ գրամ քրտինքի գոլորշիացման համար ծախսվում է 2,45 կՋ էներգիա: Ստացված էներգիայի ո՞ր տոկոսը հեռացավ օրգանիզմից քրտինքի գոլորշիացման հետևանքով: